



ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԶՈՐ ԳՑՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Որոշում թիվ 07

07-ը Մարտի 2014թ.

գ. Վարդաձոր

Վարդաձորի գյուղապետի որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին կետով.

Որոշում եմ՝

1. Ուժը կորցրած ճանաչել Վարդաձորի գյուղապետի 2011թ. ապրիլի 29-ի թիվ 38 որոշումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վարդաձորի գյուղապետ



Ռ. Սիրականյան



ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Որոշում թիվ 08

07-ը Մարտի 2014թ.

գ. Վարդաձոր

Սերյոժա Մանուկյանին գնումների համակարգող նշանակելու մասին:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով.

Որոշում եմ՝

1. Վարդաձորի գյուղապետարանի համայնքային ծառայության առաջատար մասնագետ Սերյոժա Սարգսի Մանուկյանին նշանակել գնումների համակարգող:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վարդաձորի գյուղապետ



Ռ. Սիրականյան



ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Որոշում թիվ 09

14-ը մարտի 2014թ.

գ. Վարդաձոր

Վարդաձոր գյուղի 24-րդ փողոցի թիվ 11 հասցեի 05-084-089-003 ծածկագրով 0.037 հա տնամերձ հողամասի, 51,60 ք/մ բնակելի տան և 9,55 ք/մ շինության նկատմամբ Լյովա Գարուշի Մանուկյանի ընտանիքի գույքային իրավունքները վերականգնելու մասին:

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2008թ. հունիսի 10-ի ՀՕ-117-Ն օրենքով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարին հասցեագրված համասեփականատեր Լյովա Գարուշի Մանուկյանի դիմումը.

Որոշում են՝

1. Լյովա Գարուշի Մանուկյանի ընտանիքի կողմից մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված 51.60 քառակուսի մետր բնակելի տան և 9,55 ք/մ շինության (կառուցված 1988թ.), և նրանց սպասարկման համար հատկացված 0.037 հա (370 քառակուսի մետր) տնամերձ հողամասը, որոնք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժինեռատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, օրենքի ուժով ճանաչել Լյովա Գարուշի Մանուկյանի /ծնվ.22.06.1963թ./ և Սիրանուշ Անդրանիկի Ազիզյանի/ծնվ.03.01.1968թ../, անշարժ գույքի սեփականության իրավունքը:

2. Լյովա Գարուշի Մանուկյանի ընտանիքի կողմից, շինությունները՝ կառուցվել են 1988թ. խամ քարով: շինությունների հասցեն է Գեղարքունիքի մարզ, գ.Վարդաձոր 24-րդ փողոց թիվ 11:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծին համապատասխան:

4. Առաջարկել ԱԳԿ Գեղարքունիքի տարածքային ստորաբաժանմանը օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել անշարժ գույքի նկատմամբ Լյովա Գարուշի Մանուկյանի ընտանիքի իրավունքի պետական գրանցման աշխատանքները:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վարդաձորի գյուղապետ



Ռ. Սիրականյան



ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ ԳՑՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Որոշում թիվ 10

14-ը Մարտի 2014թ.

գ. Վարդաձոր

Վարդաձոր գյուղի 11-րդ փողոցի թիվ 9 հասցեի 05-084-022-008 ծածկագրով 0.143 հա տնամերձ հողամասի նկատմամբ հանգուցյալներ Միրզո Ռուբենի և Միրուն Խանադովի Աբրահամյանների ընտանիքի գույքային իրավունքները վերականգնելու մասին:

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին «ՀՀ օրենքի 2008թ. հունիսի 10-ի ՀՕ-117-Ն օրենքով, հիմք ընդունելով վերոնշյալ հանգուցյալների թոռ՝ Արսյուն Ռուբենի Աբրահամյանի դիմումը.

Որոշում են՝

1. Միրզո Ռուբենի և Միրուն Խանադովի Աբրահամյանների ընտանիքին պատկանող 0.134 հա հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժինեռատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, օրենքի ուժով ձանաչել Միրզո Ռուբենի Աբրահամյանի /մահ.1997թ. / և Միրուն Խանադովի Աբրահամյանի /մահ. 2000թ./ անշարժ գույքի սեփականության իրավունքը:

2. Հողամասի հասցեն է Գեղարքունիքի մարզ, գ.Վարդաձոր 11-րդ փողոց թիվ 9:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծին համապատասխան:

4. Առաջարկել ԱԳԿ Գեղարքունիքի տարածքային ստորաբաժանմանը օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել անշարժ գույքի նկատմամբ Միրզո Ռուբենի Աբրահամյանի ընտանիքի իրավունքի պետական գրանցման աշխատանքները:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վարդաձորի գյուղապետ



Ռ. Սիրականյան



ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Որոշում թիվ 11

14-ը մարտի 2014թ.

գ. Վարդաձոր

Վարդաձոր գյուղի 24-րդ փողոցի թիվ 1 հասցեի 05-084-065-002 ծածկագրով 0.92 հա տնամերձ հողամասի, 230 ք/մ շինությունների նկատմամբ հանգուցյալներ Միրզո Ռուբենի և Միրուն Խանադովի Աբրահամյանների ընտանիքի գույքային իրավունքները վերականգնելու մասին:

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2008թ. հունիսի 10-ի ՀՕ-117-Ն օրենքով, հիմք ընդունելով վերոնշյալ հանգուցյալների թոռ՝ Արայոն Ռուբենի Աբրահամյանի համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը.

Որոշում են՝

1. Միրզո Ռուբենի և Միրուն Խանադովի Աբրահամյանների ընտանիքի կողմից մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված 230 քառակուսի մետր շինությունների (կառուցված 1989թ.), և նրանց սպասարկման համար հատկացված 0.92 հա (920 քառակուսի մետր) տնամերձ հողամասը, որոնք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժինեռատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, օրենքի ուժով ճանաչել Միրզո Ռուբենի Աբրահամյանի /մահ.1997թ. / և Միրուն Խանադովի Աբրահամյանի /մահ. 2000թ./ անշարժ գույքի սեփականության իրավունքը:

2. Միրզո Ռուբենի Աբրահամյանի ընտանիքի կողմից, շինությունները՝ կառուցվել են 1989թ. խամ քարով: շինությունների հասցեն է Գեղարքունիքի մարզ, գ.Վարդաձոր 24-րդ փողոց թիվ 1:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծին համապատասխան:

4. Առաջարկել ԱԳԿ Գեղարքունիքի տարածքային ստորաբաժանմանը օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել անշարժ գույքի նկատմամբ Միրզո Ռուբենի Աբրահամյանի ընտանիքի իրավունքի պետական գրանցման աշխատանքները:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վարդաձորի գյուղապետ



Ռ. Սիրականյան



ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ ԳՑՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Որոշում թիվ 12

17-ը Մարտի 2014թ.

գ. Վարդաձոր

Վարդաձոր համայնքի բնակելի կառուցապատման և գյուղ. նշանակության նշանակության ներքոնշված հողատեսքերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետով և ՀՀ <<Հողային օրենքի>> 61-րդ հոդվածի 1-ին կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Աճուրդ-վաճառքի միջոցով օտարել՝

1/ Բնակելի կառուցապատման նշանակության, 43-րդ փողոցի 1-ին հասցեի 0.0905հա հողատարածքը /ծածկագիր 05-084-0224-0012/, սեփականության վկայական թիվ 03032014-05-0027: Հողամասի մեկնարկային գինը 160825 դրամ, Կանխավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:

2/ Բնակելի կառուցապատման նշանակության, Երանոսի խճուղի 1-ին նրբանցք թիվ 6 հասցեի 0.10հա հողատարածքը /ծածկագիր 05-084-0211-0022/, սեփականության վկայական թիվ 03032014-05-0026: Հողամասի մեկնարկային գինը 171000 դրամ, Կանխավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:

3/ Գյուղատնտեսական նշանակության 0.151հա արոտավայր /ծածկագիր 05-084-0106-0054/, սեփականության վկայական թիվ 26042013-05-0026: Հողամասի մեկնարկային գինը կադաստրային արժեքի 100%-ի չափով, կանխավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:

4/ Գյուղատնտեսական նշանակության 0.0185հա վարելահող և արոտ հողատարածք /ծածկագիր 05-084-0106-0062/, սեփականության վկայական թիվ 11032014-05-0019: Հողամասի մեկնարկային գինը կադաստրային արժեքի 100%-ի չափով, կանխավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:

Հողամասերի նկատմամբ սահմանափակումներ չկան:

5/ Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վարդաձորի գյուղապետ



(Handwritten signature)

Ռ. Սիրականյան



ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԶՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Որոշում թիվ 13

20-ը մարտի 2014թ.

գ. Վարդաձոր

Վարդաձոր գյուղի 24-րդ փողոց, թիվ 5 հասցեի հողամասը բաժանելու կապակցությամբ վերահասցեավորելու մասին:

Կապված նշված հողամասը բաժանելու հետ, ղեկավարվելով 2005թ.. հասցեների գրանցման մասին ՀՀ կառավարության 2387-Ն որոշման պահանջներով.

Որոշում եմ՝

1. Համայնքի 24-րդ փողոց, թիվ 5 հասցեի, ծածկագիր՝ 05-084-065-006, բաժանվող մասին հատկացնել 24-րդ փողոց, թիվ 5/1 հասցեն, իսկ մնացած մասին թողնել 24-րդ փողոց, թիվ 5 հասցեն:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վարդաձորի գյուղապետ



Ռ. Սիրականյան